Հոդվածների չափորոշիչներ

1) ***Ընդունման նախապայմանները*** - Հոդվածների նախնական ընդունման պայմաններն են՝ ա) համապատասխանությունը ժողովածուի ձեւաչափին (թեմա, ոճ, գիտական համակարգ), բ) ինքնությունը (այլ տեղ հրատարակված չլինելը), գ) որոշակի նորույթ բովանդակելը, դ) մեթոդապես հիմնավորված լինելը, ե) հստակ կառուցվածքը (հնարավորինս ենթաբաժանումներով), զ) համապատասխանությունը ստորեւ բերված տեխնիկական պահանջներին:

2) ***Ներկայացման ձեւը*** - Էլեկտրոնային կրիչով (տեքստը՝ Word ծրագրով, նկարը՝ TIFF կամ բարձրորակ JPEG ձեւաչափով. համացանցային նկարներ չեն ընդունվում): Տեքստում տողադարձ չօգտագործել: Առաջին էջի վերին աջ անկյունում գրել հեղինակի անունը, ազգանունը, կոչումը, աշխատատեղը, էլ. փոստի հասցեն, հեռախոսահամարը:

3) ***Տառատեսակը*** - Sylfaen (տեքստը՝ 12, տողատակն ու ամփոփումը՝ 10 մեծությամբ), հին բնագրերի հրապարակման դեպքում օգտագործել Grqee Nor (Unicode) տառատեսակը:

4) ***Չափը*** - A4 թղթի սահմանագիծը բոլոր կողմերից՝ 2 սմ, տողերի միջակայքը՝ 1.5:

5) ***Նկարները*** - Գծանկարները, սեւ-սպիտակ եւ գունավոր լուսանկարները ներկայացնել հոդվածից առանձին՝ որպես հաջորդական միավորներ (նկ./աղ. 1, 2, 3…)՝ ոչ պակաս քան՝ 600 DPI խտությամբ: Նկարներին կցել «*Նկարների ցանկ*»՝ յուրաքանչյուրի բացատրությամբ եւ նկարի աղբյուրի հղմամբ:

6) ***Հղումները*** - Տողատակ՝ անվան սկզբնատառ եւ ազգանուն (թավ)-վերնագիր-հրատարակման տեղ-թիվ-էջ-նկար հաջորդականությամբ (նույնն է բոլոր լեզուների համար): Սկզբնաղբյուրի, մամուլի եւ արխիվի հղման դեպքում աշխատել պահպանել նույն սկզբունքը: Համացանցային հղումներն ընդունելի են միայն այն դեպքում, եթե ունեն հեղինակ, վերնագիր, թվական, պաշտոնական կայք: Հղումների համարակալումը՝ հաջորդական (1, 2, 3…) ամբողջ հոդվածի համար: Մի քանի միավորները մեկ հղման մեջ տարանջատել միջակետով: Հղման կրկնման դեպքում օգտագործել «Անդ» եւ «Նշվ. աշխ.»: Հապավման դեպքում չակերտները բացակայում են:

7) ***Ծանոթագրությունները*** - Տողատակ՝ հղումների սկզբունքով: Պատմական բնագրերի ծանոթագրությունները՝ տեքստի վերջում, տարընթերցումները՝ տողատակում: Խնդրվում է հնարավորին խուսափել ծավալուն ծանոթագրություններից:

8) ***Ամփոփումները*** - Անգլերեն եւ ռուսերեն, ծավալը՝ ոչ ավել քան 150 բառ յուրաքանչյուրը (ավել լինելու դեպքում դրանք կկրճատվեն խմբ. կողմից): Երկու լեզուներով գրված ամփոփումների բովանդակությունը պետք է լինի նույնը: Թարգմանել նաեւ հեղինակի անուն-ազգանունը եւ հոդվածի վերնագիրը:

Հ.Գ. Հոդվածների նախնական ընտրությունը ժողովածուի համար կատարվում է ըստ ձեւական, իսկ վերջնականը՝ ըստ բովանդակային համապատասխանության սկզբունքի: Տպագրության արագությունը կախված է հոդվածի ձեւաբովանդակային ներդաշնակության աստիճանից:

Կանխավ շնորհակալություն:

Հագանքով՝ Գիտաժողովի կազմկոմիտե